Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
հունվարի 17-ի N 42 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ԲԱՑ ԹՈՂՆՎՈՂ ՋՐԻ՝ 170 ՄԼՆ ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵՏՐԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԻՆ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԱՃԱՌՔԻՑ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են 2018 թվականի ընթացքում Սևանա լճից բաց թողնվող ջրի՝ 170 մլն խորանարդ մետրը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություններում առաջացող լրացուցիչ գումարների (այսուհետ՝ լրացուցիչ գումարներ) հաշվարկման և վճարման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Սևանա լճից 2018 թվականի ընթացքում բաց թողնվող ջրի՝ 170 մլն խորանարդ մետրը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից՝

1) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությունում առաջացող լրացուցիչ գումարը ($ԼԳ_{ՄԷԿ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԼԳ_{ՄԷԿ} = [(Է_{առլր} - Է_{առլրկող}) \times ՍԴ_{ՄԷԿ}] \times 0,80,$$

որտեղ՝

ա. $Է_{առլր}$ –ն «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականի օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 9-ը, սեպտեմբերի 14-ից մինչև սեպտեմբերի 20-ը և հոկտեմբերի 16-ից մինչև հոկտեմբերի 24-ը

ընկած ժամանակահատվածներում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն առաքված էլեկտրական էներգիայի քանակն է (կՎտxժ),

բ. $Է_{առլրկող}$ –ն 2018 թվականի օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 9-ը և հոկտեմբերի 16-ից մինչև հոկտեմբերի 24-ը ընկած ժամանակահատվածներում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության «Արգել» ՀԷԿ-ի կողմից կողային ջրերի հաշվին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն առաքված էլեկտրական էներգիայի քանակն է (կՎտxժ),

գ. $ՍԴ_{ՄԷԿ}$ -ն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում սահմանված առաքվող էլեկտրաէներգիայի դրույքն է (դրամ/ կՎտxժ)՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունում առաջացող լրացուցիչ գումարը ($ԼԳ_{ՀԷՑ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$ԼԳ_{ՀԷՑ}$ = [($Է_{առլր}$ -$Է_{առլրկող}$) x ($ՍԴ_{Հր-5}$ – $ՍԴ_{ՄԷԿ}$)] x 0,80, որտեղ $ՍԴ_{Հր-5}$ -ն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության շոգեգազային ցիկլով էլեկտրական էներգիա արտադրող «Հրազդան-5» կայանի համար երկդրույք սակագնային համակարգում սահմանված առաքվող էլեկտրաէներգիայի դրույքն է (դրամ/ կՎտxժ)՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված $Է_{առլր}$ և $Է_{առլրկող}$ մեծությունների վերաբերյալ տեղեկատվությունը «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություններին տրամադրվում են «Հաշ-

վարկային կենտրոն» և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից:

4. Սույն կարգի 2-րդ կետի համաձայն «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություններում հաշվարկված լրացուցիչ գումարները վճարվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական ստորաբաժանումում Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության արտաբյուջետային հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ